

Թաթուլ Կրպեյանի 50 ամյակին նվիրված միջոցառում Ստեփանակերտում

Նոյեմբերի 7-ին Ստեփանակերտի մշակույթի եւ երիտասարդության պալատում, ՀՀ պաշտպանության նախարարության եւ Երեւանի պետական համալսարանի նախաձեռնությամբ կազմակերպվել է հուշ-երեկո՝ նվիրված Արցախյան պատերազմի առաջամարտիկ, ՀՀ ազգային հերոս, ՀՀ Դաշնակցության գաղափարակիր Թաթուլ Կրպեյանի ծննդյան 50 ամյակին:

Միջոցառմանը ներկա էին ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը, ՀՀ Արցախի ԿԿ անդամ, ԼՂՀ ԱԾ փոխնախագահ Վահրամ Բալայանը, ՀՀ Արցախի ԿԿ անդամ, ԼՂՀ փոխվարչապետ Արթուր Աղաբեկյանը, ԼՂՀ ՊԲ նախարար Լեւոն Մնացականյանը, ՄԵՀ նախարար Նարինե Աղաբալյանը, ԱրԴՀ ռեկտոր Մանուշ Մինասյանը, պաշտոնատար այլ անձինք, ԵՊՀ եւ ԱրԴՀ ուսանողներ, դասախոսներ, զինվորներ եւ այլոք:

Միջոցառման ընթացքում ազգային երգ ու պարով լույս էն ունեցել ԵՊՀ ուսանողները:

Հնչել են Թաթուլ Կրպեյանին նվիրված երգեր, ուսանողները կարդացել են Թաթուլի հեղինակած բանաստեղծությունները: Ներկայացվել է Թաթուլ Կրպեյանի

կյանքը եւ գործունեությունը, նրա դերը Արցախյան ազգային-ազատագրական պայքարում:

Արցախյան պատերազմի առաջա-

21-ին, ՀՀ Թախի շրջանի Արեգ գյուղում:

Համալսարանական տարիներից Թաթուլը միանում է Հայկական ազատագ-

միավորելուն ուղղված «Միացում» կազմակերպության անդամ էր:

1990թ. սեպտեմբերին մեկնել է Արցախ, որտեղ վիճակն օրհասական էր: Իր իսկ հիմնած զինված խմբով 1990թ. սեպտեմբերից մինչեւ 1991թ. մայիսը ղեկավարում էր Գետաշենի ենթաշրջանի (Գետաշեն-Մարտունաշեն) ինքնապաշտպանությունը՝ ընդդեմ ադրբեջանական զինված ուժերի եւ ոստիկանական խմբավորումների:

Թաթուլն ասում էր. «Ինչո՞ւ եք վախենում մահից: Հողի համար ես հենց հիմա պատրաստ եմ մեռնելու՝ հողի եւ ազգի համար: Ես ոչ մի անգամ չեմ իջնի Երեւանի օդանավակայանում եւ ասեմ՝ Գետաշենը հանձնեցինք: Ես այստեղ կմեռնեմ, բայց դա չեմ անի...»: Վերջին անգամ, երբ վերադառնում էր Երեւանից, գնալիս ասաց. «Գիտեմ, որ Երեւան այլեւ չեմ գա, ինձ կբերեն...»:

1991 թվականի ապրիլի 30-ին, երբ Գետաշենում դրությունն օրհասական էր, «Օղակ» գործողության ժամանակ զոհվում է Թաթուլը: Նրա սիրտնքի ու նվիրումի համար ժողովուրդը հերոսին կոչում է Գետաշենի արծիվ անունով:

Արմինե ՆԱՐԻՆՅԱՆ



մարտիկ, ՀՀ Դաշնակցության գաղափարակիր, Գետաշեն-Մարտունաշեն ենթաշրջանի ինքնապաշտպանության հրամանատար, ՀՀ ազգային հերոս Թաթուլ Կրպեյանը ծնվել է 1965թ. ապրիլի

րական շարժմանը: Թաթուլն այդժամ անգամ կարեւորում էր ուսումը եւ նույն օրերին պատմություն էր դասավանդում Գետաշենի երկու դպրոցներում: Նա նաեւ Արցախը Հայաստանի հետ վերա-

Արմանն ընտրեց զինվորական հագուստը, քանի որ դա նրա հոգուն համահունչ էր

Նոյեմբերի 7-ին կլրանար սույն տարվա սեպտեմբերի 4-ին հակառակորդի կողմից ձեռնարկված գործողության արդյունքում զոհված պայմանագրային զինծառայող, ՀՀ Դաշնակցության գաղափարակիր Արման Ստեփանյանի ծննդյան 34 ամյակը:

Այդ առիթով նրա շիրիմին էին այցելել ընտանիքը, հարազատները, զինակից ու կուսակցական ընկերները: Ներկաները ծաղիկներ են խոնարհել եւ իսկապրկել հերոսի հիշատակը:

«Արման Ստեփանյանն այսօր կդառնար 34 տարեկան: Նա իր կյանքի կարճ, բայց բովանդակալից տարիներն ապրեց նվիրումով՝ իր հայրենիքին, իր որդեգրած գաղափարին, իր ընտանիքին: Մեր բոլորի հուշերում նա կմնա որպես բարի, ազնիվ, գաղափարական անձնավորություն», - ասել է ՀՀ Դաշնակցության Արցախի ԿԿ անդամ, Արմանի բարեկամ Ժիրայր Շահիջանյանը:

Իսկ ՊԲ փոխգնդապետ, Արմանի զինակից ու մտերիմ ընկեր Սերյոժա Իվանյանը մեզ հետ ունեցած զրույցում նշել է. «Արմանի մասին դժվար է խոսել, բայց եւ պատվաբեր, որովհետեւ նա մի անձնավորություն էր, ում համար հայրենիքը բարձր արժեք էր: Նա նվիրված էր իր զինակից ընկերներին, իր գործին: Ցանկացած իրավիճակում նրա համար «չէ» բառը գոյություն չուներ. միշտ առաջինն էր, միշտ պատրաստ ցանկացած գործողության: Ոչ մի բանից չէր տրտնջում, որովհետեւ քաջ գիտակցում էր, որ բոլորիս գործը մեր հայրենիքի պաշտպանությունն է, ինչն անում էր մեծագույն պատասխանատվությամբ: Կարծում եմ՝ չի գտնվի մեկը, ով ինչ-որ բացասական բան կարողանա արտահայտել նրա մասին, որովհետեւ Արմանը բարի սիրտ ուներ, միշտ ժպտադեմ, միշտ բոլորին օգնող ու լավ խորհուրդներ տվող: Նրա կորուստը մեծ ցավ է մեզ համար»:

«4-րդ կուրսի ուսանող էի, երբ առաջին անգամ եկա ՀՀ Արցախի երիտասարդական միության միջոցառմանե-

րից մեկին. Արմանն էլ էր եկել կնոջ՝ Էլենի հետ, ում հետ հենց ՀՀ-ում էին ծանոթացել,- պատմում է ՀՀ անդամ Արմինե Նարինյանը,- երիտասարդները հեղափոխական-հայրենասիրական երգեր էին երգում: Հետո, հիշում եմ, ընկերներն ասացին՝ Արման, քո հերթն է, քո երգը երգիր: Երգեց Արմեն Մովսիսյանի «Չինվորի երգը»: Անկեղծ ասեմ՝ շատ հուզված էի. երգում էր՝ ամեն մի տողը զգալով եւ աչքերը փակ: Այդուհետ այդ երգը լսելիս միշտ նրան եմ հիշում: Չարմանալիորեն նա արժանա-

տանջում էր հայրենիքի ցավը, գնահատում եւ պաշտում էր հայրենիքը, գիտեր ընկեր լինել, լավ հայր եւ ամուսին լինել»:

Իսկ Արմանի մտերիմ ընկեր, ՀՀ անդամ Համայակ Դադամյանը «Ապառաժ»-ի հետ ունեցած զրույցում պատմում է. «Մարդիկ տարբեր են. հաճախ շատերը խոսում են բարձր գաղափարների մասին, սակայն առօրյա կյանքում, երբ հերթն իրենց է հասնում, իրենցից կախված մի փոքր քայլն անգամ զլանում են կատարել: Բոլորը ցանկանում են փո-



ցավ նույն ճակատագրին, ինչի մասին այդքան հուզիչ երգում էր: Չինվորական ծառայության անցնելուց հետո էլ շատ հաճախ էր մեզ այցի գալիս, հետաքրքրվում մեր հաջողություններով՝ շատ դեպքերում խնդրելով այս կամ այն հայրուկի մասին պատմող գրքեր տրամադրել զինվորների համար: Դասախոսություններ էր պատրաստում՝ նրանց ներկայացնելով մեր պատմությունը: Ասում էր՝ գիտե՞ք, զարմանալի է՝ շատերը տեղյակ չեն մեր պատմությանը եւ, առհասարակ, անցյալի իրականությունը: Իրեն պարտավորված էր զգում այն ներկայացնելու մատաղ սերունդին: Նա ՀԱՅ էր, մեծատառով հայ, ում իրավամբ

խել աշխարհը, դիմացինին, միայն թե՛ ոչ իրենք իրենց: Հայտնի ճշմարտություն կա՝ ուզում ես փոխել աշխարհը, սկսիր ինքդ քեզնից: Արմանն այդպիսին էր: Նա չէր խոսում միայն խոսելու համար, այլ՝ իր իսկ քարոզած արժեքների կրողն էր: Արտաքինից բոլորիս պես սովորական մարդ էր, պարզ, միամտության աստիճանի ազնիվ, սակայն ով ճանաչում էր նրան, հիանում էր նրանով: Այն երջանիկներից է, ով բախտ ունեցավ 10 տարուց ավելի նրա հետ ընկերություն անելու: ՀՀ երիտասարդականի բոլոր ընկերների համար նա սիրելի ընկեր էր: Բոլորիս օգնում էր, ոգեւորում, եւ, ամենակարեւորը, սի-

րում: Նրա մեջ այնքան սեր կար, որ անխտիր բոլորիս հետ կիսում էր: Մերը հետաքրքիր հատկություն ունի. բաժանելուց՝ այն շատանում է: Նա այդ գաղտնիքը շատ լավ գիտեր... Առհասարակ, կա երկու ընտանիք՝ փոքր եւ մեծ: Առաջինը յուրաքանչյուրիս օջախն է, տունը, իսկ երկրորդը հայրենիքն է. բոլորս միասին մի մեծ ընտանիք ենք: Բոլորս սիրում ու հոգ ենք տանում մեր փոքր տան մասին, իսկ մեծը՝ շատ հաճախ անտեսում: Արմանը տարբերվում էր դրանով: Եթե մեկը, անգամ պատահական անցորդ, փողոցում աղբ նետելու նրա ներկայությամբ կամ վիրավորել մեկին, Արմանը կասստեր, եւ տվյալ մարդը հաջորդ անգամ կամաչեր նման քայլ անել:

Արմանն ընտրեց զինվորական հագուստը, քանի որ դա նրա հոգուն համահունչ էր: Ընկերներով շատ էինք մտահոգված, երբ տարիներ շարունակ ծառայելուց հետո հայտարարեց, որ ցանկանում է տեղափոխվել սահմանամերձ զորամասերից մեկը: Շատերը տարբեր հնարներով խուսափում են առաջնագիծ գնալուց, իսկ նա, երեք անգամ անգամ երեխաներին թողնելով, առաջնագիծ գնալու դիմում էր ներկայացրել: Ընտանիքի պարագան շահարկելով՝ փորձեցինք համոզել, որ չգնա առայժմ, իսկ նա, հիշում եմ, ասաց. «Եթե ես չգնամ, դու չգնաս, մեզ նմանները չգնան, ապա ո՞վ պիտի գնա...»: Չկարողացանք առարկել, գնաց... Երանի թե մեր բոլոր նահատակ ընկերներին եւ հայրերին հանդիպելու ժամանակ ամոթ չզգանք մեր չարած գործերի համար...»:

Արմանն ապրեց ընդամենը 33 զարուն, բայց այդ ընթացքում նա հասցրեց մեծ տեղ զբաղեցնել իր ընկերների, մտերիմների, նրան ճանաչողների սրտերում, ու այդ տեղը միշտ էլ կպատկանի Արմանին: Նրա անունն այսուհետ պատգամ է հիշեցնելու բոլորիս՝ ապրել շիտակ ու հայրենասնվեր...

Չրուցեց՝ Հ.ԱՎԱԳՅԱՆԸ

Հողի, գրքի ու գաղափարի մարդը՝ Կնյազ Մելքումյան

Հայրենիքի հոգս ու ցավով ապրող, ՀՀ-ի գաղափարներով առաջնորդվող Կնյազ Մելքումյանն իր 70-ամյակը նշել է իր մեծ ընտանիքի, որը բաղկացած է 30 հոգուց, երկար տարիների ընթացքում ձեռք բերած գաղափարական ընկերների հետ, իր իսկ ստեղծած գյուղում՝ Նոր Ջրաբերդում:

«Ընտանիքս բաղկացած է 30 հոգուց՝ 4 որդի, երկու դուստր, 17 թոռ եւ մեկ ծոռ ունեմ: Սա այն ամենամեծ ներդրումն է, որ արել եմ Արցախի համար: Եվ պետք է հպարտությամբ էլ նշեմ, որ բոլորն էլ Արցախում են ապրում՝ կողք կողքի, իրար թելթելունք կանգնած»,- ասում է Կնյազ Մելքումյանը:

Կնյազ Մելքումյանը Գառնաքար գյուղից 1998 թվականին տեղափոխվել է Նոր Ջրաբերդ գյուղ եւ, ինչպես նա է ասում, պատճառները մի քանիսն էին: Նախ՝ այնտեղ կային բոլոր բարենպաստ պայմանները՝ աշխատելու, նորը ստեղծելու: Գյուղը 3000 հա մշակելի հողատարածք ունի:

«Խմելու եւ ոռոգման ջուր կա, կլիմայական պայմանները հրաշալի են հողագործության, անասնապահության համար: Բայց դա չէ հիմնական պատճառը: Իմ խորին համոզմամբ՝ ազատագրված ամեն մի մետր հող էթե չվերաբնակեցվի հայերով, ապա մեծագույն վտանգ կա, որ կբնակեցվի թշնամիներով»,- ասում է ընկեր Կնյազը:

Երբ կնոջ եւ որդիների հետ տեղափոխվեց Նոր Ջրաբերդ, նույնիսկ սկսեց գաղափարներ չկային ապրելու համար: 15 տարի լույս չեն ունեցել: Կամաց-կամաց ամեն ինչ ստեղծելով՝ այսօր հպարտորեն կարող են ասել, որ իրենց հաջողվել է թե՛ գյուղ հիմնել, թե՛ ապրելու համար լավ պայմաններ ստեղծել, ինչն արդեն ոչ միայն իրենց, այլեւ մատաղ սերնդի համար է:

Կնյազ Մելքումյանի կինը՝ տիկին Էլմիրան, նշում է, որ յուրաքանչյուր կին պարտավոր է իր ամուսնուն սատարել, եւ այս գիտակցումով սիրով համաձայնել է տեղափոխվել՝ հավատացած լինելով, որ հաջողության կհասնեն այնտեղ:

«Մարդ չի կարող ամեն ինչի միակամից հասնել: Աշխատասիրություն եւ, որ ավելի կարեւոր է, համբերություն է պետք: Ցանկացած մեկը, ով գյուղատնտեսությամբ է զբաղվում, պետք է քաջ գիտակցի, որ առաջին մի քանի տարիներին չի կարող մեծ արդյունք ակնկալել: Պետք է համոզվումը ունենալ, որ բռնած գործը բարի է եւ անպայման հաջողություն կբերի. լավատեսությունը գործի կեսն է»,- նշում է նա:

Երբ Մելքումյանների ընտանիքը տեղափոխվել է Նոր Ջրաբերդ, ընդամենը 7 գլուխ մանր եւ խոշոր եղջերավոր անասուն ունեին: Այսօր դրանց թիվը գերազանցում է 200-ը: 40 հա-ից ավել հող են մշակում: Տարիների ընթացքում ձեռք են բերել գյուղտնիկիկա:

Այսօր գյուղում ապրում է 27 ընտանիք, 95 բնակիչ: Գյուղն ունի չորսամյա դպրոց, ուր դասավանդում է 70-ամյա մանկավարժ Կնյազ Մելքումյանն իր հարսի հետ: Նա իր տան 2 սենյակները հատկացրել է դպրոցի համար: 4-րդ դասարանն ավարտելուց հետո պետության կողմից տրամադրված մեքենան գյուղի աշակերտներին ամեն առավոտ

տանում է մոտակա գյուղ, ուր ավագ դպրոց կա:

Գյուղացիները նշում են, որ Կնյազ Մելքումյանը գյուղի խորհրդատուն է. ով ինչ նոր գործ է բռնում՝ անպայման խորհուրդ է հարցնում նրանից:

«Մի բան կա այս գյուղում, որով կարող եմ հպարտանալ. դա կազմակերպվածությունն է եւ մեկը մյուսին օգնելու պատրաստակամությունը, որը, ցավոք, շատ համայնքներում պակասում է: Եթե գյուղում մեկին օգնություն է պետք, բոլորս միասին հավաքվում եւ օգնում ենք: Այսօր գյուղում ընդհանուր 800 գլուխ խոշոր եղջերավոր անասուն կա, ինչով դժվար թե կարող են հպարտանալ Արցախի մյուս համայնքները: Միայն մեր ընտանիքը տարեկան 250 տոննա կաթ է հանձնում Արցախում արտադրվող կաթնամթերքի գործարանին»:

Ասում է՝ Ղարաբաղում գործ գտնելը բավական հեշտ է, աշխատասեր մարդիկ են պետք, որ կապված լինեն այս հող ու ջրին: Պատճառներից մեկը, ըստ ընկեր Կնյազի, արտասահմանից եկած դրամական օգնություններն են, որոնք, ճիշտ է, մեծ դեր ու նշանակություն ու-



նեցան, բայց նաեւ ժողովրդին սովորեցրին չաշխատել. «Ոչ բոլորն են ուզում չարչարվել եւ ստեղծել: Շատերն ավելի հեշտ ճանապարհներ են փնտրում: Անհերքելի ճշմարտություն է, որ եթե հեշտ ճանապարհով գնաս՝ երկար չես գնա եւ շատ բանի էլ չես հասնի: Համոզված եմ՝ Արցախում այսօր տնտեսական հեղափոխություն է պետք: Պետք է շատ հարցեր կարգավորվեն պետության կողմից: Տնտեսության եւ, առավել եւս, գյուղատնտեսության մեջ մասնագիտական մոտեցումը բացակայում է. դրա պարտադրողն ու կատարողը նույնպես ժողովուրդը պիտի լինի»:

Շարժման եւ պատերազմի տարիների մասին խոսելիս՝ նշում է, որ թիկունքի աշխատող էր, եւ ամեն ինչ անում էր իր համայնքի՝ Գառնաքարի բնակիչների հետ, որ խրամատում կանգնած զինվորը զգա ժողովրդի հոգածությունն իր հանդեպ:

1988 թվականին Ստեփանակերտի ցույցերի ժամանակ կազմակերպում էր, որ գյուղից սնունդ տեղափոխեն Ստեփանակերտի ցուցարարներին: Ասում է.

«Գիտակցում էի, որ ուրիշ հնարավորություն մեզ չի տրվի, դրա համար ջանք չէինք խնայում»:

Հիշում է, թե ինչպես պատերազմից առաջ մի օր «ՈւԱԶ» մակնիշի մեքենայով 11 համագյուղացիներով գնում էին Այգեստան, երբ հաջեն գյուղի մոտակայքում զինված եւ դիմակներով օմոնականները ճանապարհը կտրեցին, սկսեցին ստուգել անձնագրերը: «Մեզ հորդորեցին մեքենայից իջնել: Այդ պահին «Կամագ» մակնիշի մի մեքենա հետեւից եկավ եւ օմոնականները դա էլ կանգնեցրին: Վարորդը սկզբում արգելակեց: Կարծում էինք՝ հիմա պիտի կանգնի: Միանգամից, սակայն, մեքենան արագ առաջ սլացավ: Օմոնականները սկսեցին կրակել՝ վիրավորելով մեքենայի անձնակազմին: Մեքենան չկանգնեց: Ավելի ուշ պարզվեց, որ «Կամագ»-ով գնեք էին տեղափոխում... Այդ պահին հասկացա, որ պատերազմն անխուսափելի է»,- պատմում է նա:

Գյուղի կոլտնտեսության նախագահն էր, երբ սկսվեց պատերազմը: Ասում է՝ իր ամենակարեւոր առաքելությունը գյուղի բնակիչներին միավորելն

Պատերազմի ընթացքում տասնյակ կիլոմետրերով խրամատներ են կտրել գյուղացիք:

«Այնպիսի մի մթնոլորտ էր ստեղծվել գյուղում, որ ցանկացած մարդ, նույնիսկ 80 տարեկան ծերունին, օգնում էր որեւէ բանով: Բոլորս մեկ հոգու նման էինք, մեկ կազմակերպված ընտանիք, բոլորս մեկ նպատակ ունեինք՝ հաղթել: Կարծում եմ՝ դա էր մեր հաղթանակի գրավականը»:

Ընկեր Կնյազը ցավով նշում է, որ պատերազմի տարիներին թիկունքում աշխատողներն այդպես էլ ստվերի տակ են մնացել, նրանց կատարած գործն այդպես էլ ըստ արժանվույն չի գնահատվել:

«Կարծում եմ՝ այն մարդկանց, ովքեր թիկունքում էին գործում, պետք է գնահատել եւ կարգավիճակ տալ, որպեսզի այսօր -վաղը չասես, թե այդ մարդիկ ոչ մի ներդրում չունեն մեր երկրի ազատագրման գործում»:

1998 թվականին Կնյազ Մելքումյանն անդամագրվել է ՀՀ-ի Հարցերին եւ առ այսօր մնում է ՀՀ-ի լավագույն ավագ ընկերներից մեկը:

«Պատերազմի ժամանակ Այգեստան գյուղի հետ կապ եմ ունեցել: Հաջաբաշ անունով մի դաշնակցական մեր գյուղի համար գնեք էր բերել, ես էլ նրան եմ տվել ազդեցության վերջված 4 ձի: Նրա կերպարը շատ տպավորել էր: Այնուհետեւ ծանոթացա նաեւ ՀՀ-ի անդամ Կամր Բարսեղյանի հետ: Մի քանի տարի անց Կամր Բարսեղյանի եւ Գագիկ Մարտիրոսյանի միջոցով անդամագրվեցի ՀՀ-ի Հարցերին»:

Ասում է՝ ՀՀ-ի գաղափարները շատ վաղուց էր կրում իր մեջ: Դեռ 1965 թվականին, երբ ուր իր է Արցախյան շարժումը պետք է սկսվեր, մասնակցել է գաղտնի ժողովներին, ծանոթացել ՀՀ-ի մասին արգելված գրականությանը:

«Հիշում եմ՝ ազգիս նահապետներից մեկն Անդրանիկի նկարն ուներ: Թաքուն գնում էինք խնդրում, որ ցույց տա, ինքն էլ ասում էր՝ հանկարծ ուրիշ տեղ չասեք, թե չէ ինձ կկորցնեն: Դեռ մանկուց Անդրանիկի կերպարը, նրա մասին պատմած պատմությունները Անդրանիկի մասին, արգելված հերոսները հարցականներ էին թողել իմ մեջ, որի պատասխաններն ավելի ուշ ստացա»:

Պատերազմի թո՛հ ու բո՛հով անցած, սակայն լավատեսությամբ լցված Կնյազ Մելքումյանն այսօր վստահաբար ասում է, որ մեր բոլորիս հաջողության գրավականը, ինչպես պատերազմի տարիներին, այնպես էլ այսօր, մնում է միասնական պայքարը եւ սերն ու միջանց օգնելու պատրաստակամությունը: Կոչ է անում բոլոր այն երիտասարդներին, ովքեր ցանկություն ունեն գյուղատնտեսությամբ, հողագործությամբ զբաղվելու եւ չեն վախենում աշխատանքից, գնալ Նոր Ջրաբերդ, ուր նա կօգնի ամեն ցանկացողին թե՛ իր խորհուրդներով, թե՛ օժանդակությամբ:

2013 թվականին ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը Կնյազ Մելքումյանին պարգևատրել է «Երախտագիտություն» մեդալով:

Ա. ՆԱՐԻՆՅԱՆ

Հայոց պատմության օղակը կամբողջանա միայն Անին ազատագրելուց հետո. Կ.Քեբաբջյան

«Մեծ մայրս միշտ ասում էր ինձ, որ թուրքերը հիմար են: Նրանք կարողացան գողանալ մեր հարստությունը եւ հողերը, բայց մեր ազնվական արյունը չկարողացան փոխել: «Դու ազնվական արյուն ունես, տղա՛ս, դու պետք է մեծանաս եւ ազգի համար պիտանի անձնավորություն դառնաս,- ասում է հայրենադարձ, բարերար, ՀՀ Դաշնակցության անդամ, Մերձավոր Արեւելքում ԼՂՀ ներկայացուցիչ, Հայ սեւ գոտիների միության, ԼՂՀ Ուշուի ֆեդերացիայի հիմնադիր, Արեւելյան մարտարվեստների վարպետ Կարո Քեբաբջյանը՝ նշելով, որ այդ խոսքերը փոքր տարիքից արմատավորվել են իր մեջ:

Կարո Քեբաբջյանի պապերն արմատներով Սեբաստիայից են, Կիլիկիայի ազնվական ընտանիքից: Ամբողջ գերդաստանը շարժերի ժամանակ ենթարկվել է բռնության: Ողջ է մնացել միայն տատիկը, ով հրաշքով է փրկվել:

Հետաքրքիր պատմություն ունի նաեւ «Քեբաբջյան» ազգանվան պատմությունը: Գերդաստանը կրում էր լույսի զավակներ՝ Լուսինյան եւ Մեծածեռյան ազգանունները: Սակայն, ջարդերից հետո ազգանունը փոխվեց Քեբաբջյանի, քանի որ տատիկը կոճակների մեջ պահած ոսկիները փոխում էր ոչխարների հետ եւ խորոված անում՝ հյուրասիրելով քարավանի ուղեւորներին:

Կարո Քեբաբջյանը ծնվել է Լիբանանում: Հետաքրքրված էր մարտարվեստով եւ մարտարվեստում հայ երիտասարդներին համախմբելու գաղափարով: «Այդ ժամանակ Ուշուս գաղտնի գիտություն էր, չկային մարտարվեստի դպրոցներ: Ինձ հաջողվեց ծանոթանալ ուշուի վարպետների հետ, ովքեր ինձ օգնեցին դառնալ Մեծ վարպետ: Այս հարցում ինձ ուղղորդեց նաեւ հայրս: Սկզբում, երբ իմացավ որոշմանս մասին, առարկեց, բայց հետո զիջեց՝ ինձանից երդում պահանջելով, որ այն, ինչ սովորեմ՝ ծառայեցնելու եմ ազգիս: Ես երդվեցի ժառանգաբար մեզ փոխանցված Կիլիկյան թագավորական դաշույնի վրա: Մինչեւ հիմա ուղղորդվում եմ երդումովս,- պատմում է Կ. Քեբաբջյանը,- հայրս իր աշխատավարձի կեսը տրամադրեց ինձ, որպեսզի ես արտասահմանում մասնագիտանամ»:


Կ. Քեբաբջյանն անդամակցել է «Սեւ գոտիներ» միջազգային կազմակերպությանը:

1974թ. Դարձել է Մերձավոր Արեւելքի սեւ գոտիների կազմակերպության մարզիչ, այնուհետ՝ Մերձավոր Արեւելքի չեմպիոն: Նույն տարում սկսել է մարզել հայ երիտասարդներին: Միակը լինելով հայերի մեջ՝ Սփյուռքի տարբեր գաղութներում բացել է կենտրոններ եւ իր պատրաստած մասնագետներին ուղղորդել դեպի հայկական մյուս գաղութներ՝ մարզելու հայ երիտասարդներին: 1976թ. պաշտոնապես հիմնել է Հայ սեւ գոտիների միջազգային ակադեմիան (ABBA):

«Հայ սեւ գոտիների միջազգային ֆեդերացիա»-ով են անցել 50 000 մարզիկներ: «Կոն ֆուի մեջ տեսա կարգապահություն: Այսօր, հայ երիտասարդը պետք է արթուն եւ զզոն լինի, պատրաստ լինի պայքարի՝ մարմնով, գեներով, հոգով եւ ուղեղով,- նշում է Վարպետը եւ ավելացնում,- ֆեդերացիա հիմնելը նաեւ հայրենադարձության միջոց էր: Սփյուռքում պատրաստելով մարզիչներ՝ ես շարունակում,- միշտ ասում եմ՝ Հայաստանի անկախությունը տեսա, ուրախ եմ, երկրորդ ուրախությունս Ղարաբաղն է ազատագրված Շուշիով, հաջորդիվ պետք է ազատագրենք մեր մնացած մայրաքաղաքները՝ նպատակ ունենալով ստեղծել պետություն, որը պետք է լինի մեր ժողովրդի հաղթանակը»:

«Այսօր իմ ամենամեծ հպարտությունն ու ուրախությունն այն է, որ ես կարող եմ բարձրաձայն ասել՝ Ղարաբաղի Ուշուի ֆեդերացիան դարձել է ամենահզոր կենտրոնը եւ պատրաստել է շատ ուժեղ մարզիկներ, որոնք մեծ հաջողությունների են հասել ու դեռ կհասնեն»:

Արցախում Ուշուի ֆեդերացիան չի սահմանափակվել միայն մայրաքաղաք Ստեփանակերտով: Արցախի տասնյակ գյուղերի պատանիներ հնարավորություն ունեցան սովորել մարտարվեստը:



Ընդհանուր առմամբ՝ Արցախում մարտարվեստ են սովորել շուրջ 5000 պատանիներ:

1999-ին Կարո Քեբաբջյանը նշանակվել է ԼՂՀ մշտական ներկայացուցիչ Մերձավոր Արեւելքում: Խոսելով դեսպանի՝ իր կողմից կատարվող աշխատանքի մասին, Կ. Քեբաբջյանը նշում է. «Դեսպանի աշխատանքը պահանջում է ամեն օրվա 24 ժամվա աշխատանք: Ինչ միջոց ունես, ինչով կարող ես՝ պետք է նպաստես ԼՂՀ ճանաչմանն ու հզորացմանը: Այսօր մենք ունենք երկու հիմնական խնդիր՝ Լեռնային Ղարաբաղի ճանաչման խնդիրը եւ ԼՂՀ հզորացման խնդիրը, ինչի համար անհրաժեշտ է ապահովել ժողովրդի անվտանգությունը հզոր բանակի շնորհիվ, զարգացնել արդյունաբերությունը: Դա պետք է ստանձնի Սփյուռքը, քանի որ ԼՂՀ-ն պաշտոնապես չճանաչված երկիր է,- ասում է նա եւ ավելացնում,- ինձ համար Ղարաբաղն անկախ պետություն է: Եթե մտածենք, որ Ղարաբաղն անկախ չէ, ապա ինչպե՞ս կարող է չճանաչված երկիրը դեսպան ունենալ»:

«Սփյուռքում, մինչեւ Արցախյան պատերազմը, Դաշնակցությունն էր մեր պետությունը՝ Լիբանանում, Ամերիկայում, Ֆրանսիայում եւ այլուր, սակայն Ղարաբաղյան պատերազմը միավորեց մեր ցայտունը՝ ազգը: Արցախ, Հայաստան, Սփյուռք միասնական պայքարեցին մեկ գաղափարի համար, մեկ երազանքի համար: Այսօր մենք ունենք Հայաստանի Հանրապետություն, ունենք

ազատ, անկախ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, հաջորդը պետք է լինի Արեւմտյան Հայաստանի Հանրապետությունը,- նշում է Կ. Քեբաբջյանը եւ շարունակում,- միշտ ասում եմ՝ Հայաստանի անկախությունը տեսա, ուրախ եմ, երկրորդ ուրախությունս Ղարաբաղն է ազատագրված Շուշիով, հաջորդիվ պետք է ազատագրենք մեր մնացած մայրաքաղաքները՝ նպատակ ունենալով ստեղծել պետություն, որը պետք է լինի մեր ժողովրդի հաղթանակը»:

Կ. Քեբաբջյանը Ղարաբաղի կարգավորման բանալին համարում է հարատուությունը: Քեբաբջյանի կարծիքով՝ վերջին շրջանում Սիրայում, Իրաքում, Լիբիայում զարգացող դեպքերը տարածվելու են նաեւ Թուրքիայում, եւ մենք՝ հայերս, այնտեղ պետք է ապահով

բաբջյանը տեղափոխվել է Աշտարակ, որտեղ ունի հողատարածք: Այդտեղից երեւում են Արարատը, Արագածը եւ Արա լեռը: Նրա նպատակն է՝ իրականացնել "Այբ-3" նախագիծը՝ սփյուռքահայերին բնակեցնելով այդտեղ: Այս տարի 5 ընտանիք իրենց հողատարածքներում արդեն կառուցել են տներ՝ նպատակ ունենալով հետագայում հաստատվել հայրենիքում:

Կ. Քեբաբջյանի որդին, ուսում ստանալով Լիբանանում, առանց հոր հորդորի ինքը որոշեց, որ պետք է Հայաստանում հաստատվի: Չնայած նրան, որ հիմա ապրում է Երեւանում՝ նպատակ ունի տեղափոխվել Շուշի:

Կ. Քեբաբջյանը եւ մի քանի բարերարներ նախաձեռնել են Շուշիի շենացման հետ կապված ծրագիր, որի առաջին փուլը «Շուշի Գրանդ Յոթելի» կառուցումն էր: Հետագայում պետք է ստեղծվի ուշուի ֆեդերացիայի կենտրոնը՝ իր մարզասրահով, չինական առողջարանով: Ծրագիրը նախատեսում է՝ «Շուշի Գրանդ Յոթելի»-ի վրա մեծ գումարներ դրվեց, բայց այսօր հազիվ հոգում ենք ծախսերը: Մենք հույս ունենք, որ գալիք տարիներին տուրիզմը կզարգանա, գործերը կլավանան եւ կկարողանանք Ղարաբաղում շարունակել մյուս ծրագրերը,- նշում է Կ. Քեբաբջյանը:

Արտագաղթի մասին խոսելով՝ Կ. Քեբաբջյանը նշել է, որ ցավով է մոտենում այս հարցին: Նրա կարծիքով՝ հզոր հայրենիքի կերտումը հնարավոր է միայն յուրաքանչյուրիս՝ հայրենիքում ապրելու, աշխատելու եւ ընտանիք ստեղծելու գրավականով: Նա իր օրինակով հորդորում է սփյուռքահայերին՝ տեղափոխվել հայրենիք: Խոչընդոտը համարում է աշխատատեղերի պակասը: «Մենք պետք է աշխատատեղեր ստեղծենք եւ թույլ չտանք, որ մարդիկ արտագաղթեն: Մենք պետք է բարձրացնենք ազգային գիտակցության զարգացումը, ինչը հավաքական մտքի խնդիր է: Ի վերջո պետք է հասկանանք, որ սա մեր իսկական հայրենիքն է, մեր զավակները, թոռները այստեղ պետք է ապրեն: Մեր ղեկավարությունը պետք է հասկանա, որ իրենց թոռները եւս պետք է ապրեն այս երկրում, այնպիսի երկրում, որպիսին իրենք կժառանգեն», - ասում է Կ. Քեբաբջյանը: «Ամբողջ կյանքում առաջնորդվել եւ ապրել եմ երկու բանաձեռով՝ առավոտ արթնացիր եւ աշխատիր այնպես, որ դու անմահ ես, եւ ապրիր այնպես, որ վաղը մահկանացու ես», եւ «Հարուստը նա է, ով գիտի թե բավարար չափով ունի. եթե դու իմանաս, թե որն է բավարարությանդ սահմանը, դու երջանիկ ու հարուստ մարդ ես»:

Նա, հետեւելով տատիկի խոսքերին եւ հորը տված երդումին, ազգի համար պիտանի մարդ է դարձել: Ավելին՝ Կարո Քեբաբջյան անունն ունի համաշխարհային ճանաչում: Նրան հարգում են թե՛ հայրենիքում եւ թե՛ Սփյուռքում: Կարո Քեբաբջյանից օրինակ վերցնելու շատ բան կա: Սխալ խորհուրդ չի լինի, եթե ասենք՝ լավ կլինեք ամենքս մի քիչ Կարո Քեբաբջյան լինե՛նք:

Լուսինե ԹԵՎՈՍՅԱՆ

125 Դեմք եւ Խորհուրդ՝ ՀՀԴ 125-Ամյակին

Ժողովրդի ծոցից ծնված եւ ժողովրդի համար գործած, իրեն հավատացող ժողովրդին ծառայած ու նրա հետ 125 երկար ու վճռական տարիներ բոլորած Հայ Յեղափոխական Դաշնակցության 125-ամյակին նվիրված հանդիսավոր նախաձեռնություններ պիտի կատարվեն առաջիկա ամսվա ընթացքում:

Դաշնակցության գործունեության 125 տարիների մասին պատմության էջերում ամրագրված են հատկանշական դեպքեր ու դրվագներ: Մեր ընթերցողներին այդ բոլորին իրագրել դարձնելու նպատակով այսօրվանից կսկսենք հրատարակել Դաշնակցության մասին 125 վկայություններ եւ նրա կենսագրությանը վերաբերող 125 անկյունաքարձային դրվագներ:

Ո՛չ մի բռնություն, ո՛չ մի հալածանք, ո՛չ մի սահման չի կարող բաժանել մի ժողովուրդ, եթե նա տոգորված է ընդհանուր շահերի գիտակցությամբ, ունի նաեւ կոշտ ու անսասան վճռողականություն եւ կապված, միացած է դարերով սնված ու պահպանված ընդհանուր բնագրերի ու զգացմունքների առողջ զարկերով:

Բրիտանացի Միջայեյան

Ո՛ւր որ էլ լինեք՝ կռվի դաշտում, թե շղթայակապ կալանավոր, բահը ձեռքերիդ մշակ, թե թափառական առաքյալ, միշտ էլ ներշնչողը լինի թող տառապողի Ազատագրության վեհ Գաղափարը, ձեր առաջնորդը՝ դիրքերի վրա մնալու պարտաճանաչության սուրբ սկզբունքը:

Հոգ չէ, թե մի օր վահանով կդառնաք, մյուս օրը՝ վահանի վրա. արդունքը նույնն է՝ հաղթությունը...

Սիմոն Չավարյան

Չէ՛, հայ ժողովուրդը անկարող է ապրել Տաճկահայաստանում տիրող կարգերում. նա ուժասպառ է լինում, նա մեռնում է, նա չի կարող չբողոքել, ոտի չկանգնել եւ չհիմնել հեղափոխության, իբրեւ յուր միակ փրկարարի: Հեղափոխությունը կանգ չի առնի ոչ մի խորտակիչ ուժի առաջ, քա-

նի գոյություն ունեն կյանքի տանջանքները: Նա միայն կփոխի իր ձեռը՝ հարմարվելով նոր պայմաններին, եւ երբեք իր էությանը:

Ռոստոմ

Ռոստոմ-թուրքական պատերազմը, Բալկաններում մանր ազգությունների ազատագրումը, Գում-Գափուի ցույցը, Վարդենիսի դեպքը Տարոնում ցնցել էին հայության բոլոր խավերին: Դարերի ստրկու-

միջով: Նա հաստատուն քայլերով առաջ է անցնում՝ համոզված լինելով, որ հաղթությունն իրենն է, որքան էլ պայմաններն աննպաստ լինեն:

Հունան Դավթյան

ՀՀԴ 125 ամյա ուղին՝ 125 դրվագներով
1. Առաջին ու մեծագույն դրվագը, բնականաբար, մեր կուսակցության հիմնումն է՝ Հայ Յեղափոխականների Դաշնակցու-



թյունից հյուծված, սիստեմատիկ ոչնչացման անդունդի գլխին կանգնած հայությունը Տաճկաստանում պահանջում էր մարդկայնորեն ապրելու իրավունք: Եւ սկսվեց ազգերի պատմագրության մեջ հազվագյուտ անհավասար կռիվներից մեկը:

Իշխան Հովսեփ Արղույան

Հասարակական գործչից, մանավանդ հեղափոխական ասպարեզում, պահանջվում է ամենադրական, որոշ, եթե կարելի է այսպես ասել՝ մետաղացած գաղափար, հայացք, որի համար նա կբարձրանա ե՛ւ կախաղան... որովհետեւ նա շատ լավ գիտի, որ ինքը, հետեւապես եւ յուր գաղափարները պիտի անցնեն արյան ու կրակի

թյուն անունով, 1890-ի հունիս-հուլիսին ամիսներին, Թիֆլիս: Կրացյանի վկայությամբ՝ «պատմությունը, դժբախտաբար, գրկել է մեզ բոլոր մանրամասնություններից. ոչ արձանագրություններ են մնացել, ոչ հիմնադիր ժողովների անդամների անվանացանկը, ոչ էլ հուշեր այդ օրերի դեպքերի մասին: Հայտնի է միայն, որ բազմաթիվ ժողովներ են գումարվել, որոնց մասնակցել են Հյուսիսային եւ Հարավային պանդոկների հատվածներից գաղտնի խմբակների ներկայացուցիչները՝ հանձինս Ռ. Խան Ազատի եւ Հ. Խուշպուլյանի»: Հիմնադիր ժողովի պատգամը հանդիսանում է ՀՀ Դաշնակցության «Մանիֆեստ»-ը:
2. 1891-ի սկիզբ. Թիֆլիսում լույս է տե-

Ճարտանակելի...

Երիտասարդների հանդիպումը Արմենչոյի ընտանիքի հետ

Արցախյան շարժման եւ գոյապայքարի ընթացքում ի հայտ եկան այնպիսի վառ անհատականություններ, ովքեր բռնելով հավերժի ճամփան, իրենց կենսակերպով ու քաջությամբ մնալուն հետք թողեցին մեր նորագույն պատմության էջերում եւ ջերմ հիշողություններ՝ ապրողների սրտերում:

Մասն անհատականություններից էր Տոհասարի արծիվ Արմեն Գասպարյանը:

Նոյեմբերի 11-ին ՀՀ Դաշնակցության Ստեփանակերտի «Նիկոլ Դուման» կենտրոնում, ՀՀԴ Արցախի երիտասարդական միության նախաձեռնությամբ, կազմակերպվել է հանդիպում Արցախյան շարժման առաջամարտիկ, դաշնակցական Արմենչոյի /Արմեն Գասպարյան/ ընտանիքի հետ:

Միջոցառմանը ներկա էր ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության անդամ Լեռնիկ Հովհաննիսյանը: Հրավիրված էին հերոսի այրին՝ Անժելա Գասպարյանը, զավակները, հարազատները, համագյուղացի, Տոհի արվեստի դպրոցի տնօրեն Սուսաննա Բալայանը:

Հանդիպումը սկսվել է Լ. Հովհաննիսյանի խոսքով, ով ողջունել է ընտանիքի անդամներին եւ կարեւորել նման միջոցառումների կազմակերպումը՝ երիտասարդներին Արցախյան պատերազմի հերոսներին ներկայացնելու ու նրանց գործը արժեւորելու տեսանկյունից: Նա նշել է, որ

նման հանդիպումների կազմակերպումը ԱԺ-ի կողմից արդեն բարի ավանդույթ է դարձել եւ այսուհետ էլ կրելու է շարունակական բնույթ:

Այնուհետեւ ներկաները կիսվել են իրենց՝ Արմեն Գասպարյանի հետ կապված հուշերով:



Երիտասարդները հանդես են եկել հերոսի անցած ուղու հետ կապված հետաքրքրող հարցերով:

Ընտանիքի անդամները շնորհակալություն են հայտնել գեղեցիկ ու բովանդակալից հանդիպման համար:

Արմեն Գասպարյանը ծնվել է 1961թ.

ապրիլի 12-ին, Արցախի Տոհ գյուղում: Արմենչոյի Արցախյան պայքարի առաջամարտիկներից էր: Տոհի նշանավոր գործողության ժամանակ հրամանատարությունը հասպողում էր գործողությունը սկսել: Չզուշանում էր շատ զոհեր տալուց, որովհետեւ փողոցային մարտեր պիտի լինեին:

րել: Ամեն իրավիճակում նա կարողանում էր հիանալի կողմնորոշվել, ուստի նրան անվանում էին Միայնակ Գայլ: Այնուհետեւ նա հասկացավ, որ «մենակը մարտադաշտում մարտիկ չէ»: Մտավ ջոկատ: 5-7 հոգով թիկունքում գործողություն էին կատարում եւ գալիս՝ հեռվից նայում էին, թե թշնամին ինչ կերպ է մեկնաբանելու այդ գործողությունը: Չափազանց համարձակ էր: Չինվորները համոզված էին, որ Արմենի ներկայությամբ հնարավոր չէ պարտվել»:

Նա զոհվել է հոր մահվան տարելիցի օրը: Ընկերները փորձում էին, տարելիցի ծիսակատարությունը պատճառաբանելով, նրան հետ պահել մարտից, սակայն Արմենչոյի պատասխանը հետեւյալն էր. «Գիտե՞ք՝ դրությունն այնտեղ ինչպես է. ինձ կանչում են»: Երբ հասավ բարձունքին, թուրքերն արդեն սկսել էին ռմբակոծությունը: Այնտեղ էլ՝ Նորաշենի մոտ, զոհվեց՝ 1993 թվականի հուլիսի 2-ին:

Արմեն Լեռնի Գասպարյանը հայրենիքի պաշտպանության գործում ցուցաբերած ակնառու խիզախության եւ անձնական արիության համար ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահության 1993թ. որոշմամբ պարգևատրվել է «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանով:

Գալիք տարվա ապրիլի 12-ին լրանում է Արմեն Գասպարյանի ծննդյան 55 ամյակը:

ՀՀԿ ԱԵՄ
լրատվական հանձնախումբ

Պատերազմը չի վերջացել, բայց այստեղ, այնուամենայնիվ, ապահով է ազատամարտիկ

1988 թվականին, Ստեփանակերտի ցույցերի ժամանակ 14-ամյա Սասունը տակից թաքուն փախչում էր ցուցարարներին քաղցրավենիք էր բաժանում՝ կատարելով ավագ ընկերների կարգադրությունը, որպեսզի հանկարծ մարդիկ քաղցի պատճառով ցույցը չթողնեն ու տուն գնան: Նա անգամ չէր մտածում, որ պատերազմ կսկսվի եւ պապի՝ պատից կախված գեղքն էլ վերջապես ճիշտ նպատակին կգործածվի արդեն իր՝ թռուռու կողմից: Շատ բան անում էր ընտանիքից թաքուն, որոշ բաների մասին էլ հարազատներն իմանում են հիմա, այն էլ՝ պատահական, Արցախի հանրային հեռուստատեսությամբ տեսնելով 1988 թվականի ցույցերի մասին պատմող տեսագրությունները: «Եթե ասեմ՝ այդ տարիքում գիտակցում էի ամբողջությամբ, թե ինչ է կատարվում մեր շուրջը, կստեմ, բայց մի բան հաստատ գիտեի՝ այլևս ազերիների հետ ապրել չենք ուզում եւ չենք ապրի, չենք կիսի ոչինչ, առավել եւս՝ չենք տա այն, ինչ մերն է», - ասում է ազատամարտիկ Սասուն Յայրապետյանը:

Պատերազմը նրա համար սկսվել է 1992-ին, երբ անդամագրվել է «Յեղակրոն» կամավորական ջոկատին, եւ մինչեւ այժմ էլ պատերազմը նրա համար չի ավարտվել: Սասունն այժմ սակրավոր է աշխատում Պաշտպանության բանակում:

1992 թվականին, երբ Մարտակերտը վտանգված էր, անդամագրվեց «Յեղակրոն» կամավորական ջոկատին: Այստեղ կային Յայրապետյանի տարբեր մարզերից տղաներ, սիրիահայեր: «Նույնիսկ ինձ-

«Յեղակրոն» կամավորական ջոկատում կռվելը, ինչպես նա է նշում, նրան շատ բան սովորեցրեց, շատ արժեքներ ձեռագրեց նրա մեջ: «Տղաներն անվախ էին. այնպիսի սիրանքներ էին գործում, որ միայն ֆիլմերում էի տեսել, կամ գրքերում էի կարդացել: Մի անգամ, հիշում եմ, Չլորան գյուղի մոտակայքում էինք, անձրեւոտ գիշեր էր եւ վրան էլ չունեինք. նստած էինք անձրեւի տակ եւ սպասում էինք, թե երբ անձրեւը վերջապես կդադարի: Տղաներից մեկը՝ Նապոլեոն անունով, որին կատակով Նապոլ էինք ասում՝ նապաստակ /իսկ նա մեր ջոկատի ամենաբարձրահասակն ու հաղթանդամն էր/, ասաց՝ ձանձրացա եւ անձրեւի տակ նստելուց, գնամ տարածքը ստուգեմ, քիչ հետո կգամ: Մի քանի ժամ անցավ՝ չկար. արդեն սկսեցինք անհանգստանալ: Հետո տեսանք տեղանքին ՀՄՄ (ԾՄԻՊ) է մոտենում. անհանգստությունը կրկնապատկվեց: Բայց հանկարծ միջից դուրս եկավ Նապոլն՝ ժպիտը դեմքին: Ուրախությանը չափ ու սահման չկար: Թե ոնց է դա նրան հաջողվել, մինչեւ հիմա չգիտեմ: Երբ խարույկին մոտ եկավ, կրակի լույսի տակ նկատեցինք, որ ոտքը վիրավոր է. նա ուրախությունից նույնիսկ չէր նկատել դա: Տարանք մոտակա բուժկետ: Պարզվեց՝ գնդակն անցել էր ոտքի ստորին մասի մկաններով, բայց, փառք Աստծո, ոսկորները չէին վնասվել: Ես ոգեւորվում էի տղաների այս եւ այլ նման օրինակներով»:

Ինչպես Սասունն է ասում՝ պատերազմը շատ բան է սովորեցրել իրեն, շատ բան էլ խլել՝ ի դեմս լավագույն ընկերների: Ինչպես նշում է՝ սարսափելին

եւ հրամայեցին, որ բոլորս հանձնենք մեր զենքերը: Երբեք այդ օրը չեմ մոռանա: Պատճառը՝ անմիջապես կենտրոնական շտաբին չենթարկվելն էր եւ անկախ գործելը»:

Ջոկատի կազմալուծվելուց հետո ջոկատի տղաներն անդամագրվեցին այլ ջոկատների: Սասունը շատ անգամներ է փոխել ջոկատները՝ տեղափոխվելով Արցախի մի շրջանից մյուսը: «Պատճառը թերեւս այն էր, որ երիտասարդ էի, եւ արյունս երակներումս եռում էր. անհամբեր էի, չէի կարող հանգիստ մի տեղ երկար մնալ, ուզում էի տեսնել՝ ինչ է կատարվում մյուս շրջաններում. մի՞գուցե մեկ ուրիշ տեղ ավելի օգտակար կարող էի լինել», - ասում է նա:

Պատերազմին մասնակցում էր նաեւ Սասունի հայրը: Երբ սկսվեց Ստեփանակերտի ռմբակոծումը, ընտանիքի մյուս անդամները տեղափոխվեցին ավելի ապահով տեղ: «Ամբողջ պատերազմի ընթացքում հորս գրեթե չէի տեսնում: Միայն մեկ-երկու անգամ տեսա, այն էլ՝ Ամանորի նախօրյակին, երբ մի քանի ժամով գալիս էի հարազատներիս այցելելու», - ասում է՝ վերապրելով այդ օրերի թաքուն կարոտը:

Սասունը պատմում է, որ պատերազմում կատարված ոչ բոլոր իրադարձություններն է հիմա հերթականությամբ հիշում, սակայն ամբողջությամբ հիշում է այն բոլոր մարդկային կորուստները, որի ականատեսն է եղել:

«Մոնթե Մելքոնյանի հրամանատարությամբ Զարվաճառում էինք: Չարեքտար գյուղը պետք էր ազատագրվեր առաջ շարժվելու համար: Սակայն գյուղն անառիկ եւ անհաղթելի էր թվում: Բարձունքում գտնվող գյուղի մի մասը շրջապատված էր լեռներով, մյուս մասը գետն էր, որ սովորականից վարար էր այդ ժամանակ, այնքան վարար, որ նույնիսկ մեծ ու ծանր զինտեխնիկան չէր անցնում: Սակայն Մոնթեի համար անելանելի վիճակներ չկային: Նա կարողացավ շրջանցել լեռները եւ ստիպել ազերիներին թողնել գյուղը եւ փախչել: Սակայն այդ օրը, բացի հաղթանակ ունենալուց, նաեւ իմ հիշողության մեջ նշանավորվել է մեկ այլ սարսափելի դեպք: Թուրքերը խոցեցին Մաճկալաշենի տղաների տանկը, եւ այն սկսվեց վառվել: Մոնթեն հրամայեց անմիջապես տանկը կցասայլով քաշել եւ հանել այդ տեղանքից: Տանկը ազերիների համար տեսանելի վայրում էր եւ կրակոցներն էլ չէին դադարում: Ինչքան փորձեցինք՝ չկարողացանք այն քաշել: Տանկը պայթեց, տանկի անձնակազմի տղաներն էլ՝ մեջը: Ալիքը մեզ չարտեց. ուսս եւ ձեռքերս այնտեղ ջարդվեցին»:

Սասունը մռայլվում է մի քանի րոպե, փորձում է չհիշել... Բոլորի լռությունից հետո շարունակում է. «Այն ժամանակ մեզ թվում էր, թե բավական մեծ ու հասուն տղամարդ ենք, պետք է ընկեր-



ների մահը պատվով ընդունենք, չկոտրվենք եւ շարունակենք կռվել՝ հանուն նրանց վրեժի: Եվ մտածում էինք՝ դա ժամանակավոր է, կհաղթահարենք կորստի ցավը: Դժբախտաբար, այդ ժամանակը մինչեւ հիմա շարունակվում է, եւ մոռանալը գնալով էլ ավելի է դառնում անհնարին...»:

Զարվաճառից հետո մի քանի ամիս հաշվարկող սովորելուց հետո նրան գործուղում են Թալիշ՝ Մանվել Գրիգորյանի ջոկատ: Հետո տեղափոխվում է Տող գյուղ, այնտեղից՝ Մարտունի, այնուհետեւ՝ Ասկերան: Ասկերանում ծանայելու ժամանակ զինադադար է հայտարարվում, եւ Սասունը գորացրվում է:

Չորացրվելու հետո մի քանի տարի աշխատել է HALO trust-ում՝ որպես սակրավոր: Հետո բանակում սակրավոր աշխատելու առաջարկ է ստացել:

Սասունը նշում է, որ լավ սակրավոր լինելու համար նախ եւ առաջ տեղանքը լավ ճանաչել է պետք՝ անտառում թե դաշտում: Հատկապես, երբ շատ հաճախ հենց թշամու «քթի տակ» եւ աշխատում, լավ կողմնորոշվել է պետք. ամեն մի քայլը կարող է ճակատագրական լինել:

Ինչպես իմացանք, հիմա ողնաշարի խնդիրներ ունի, սակայն բժիշկները խորհուրդ չեն տալիս վիրահատություն անել, քանի որ վտանգ կա, որ վիրահատությունից հետո չկարողանա այլևս քայլել: Հարազատներից շատերն ապրում են արտերկրում եւ շատ հաճախ նրան էլ են այնտեղ հրավիրում՝ ապրելու եւ բուժվելու նպատակով, սակայն կտրականապես մերժում է: «Չարմանալի ի՞նչ կա, որ մարդ չի ուզում ուրիշ երկրում ապրել, ուրիշ ավանդույթներով իր երեխաներին մեծացնել: Այո՛, պատերազմը չի վերջացել, այո՛, մենք բոլորս էլ միայն խաղաղություն ենք երազում, բայց, այնուամենայնիվ, այստեղ ապահով է: Մեր ապահովությունը երաշխավորված է մեր իսկ կողմից», - ասում է ազատամարտիկը: *Արմինե ՆԱՐԻՆՅԱՆ*



նից 2-3 տարով փոքր տղաներ կային: Սովորաբար, մինչ այդ՝ ուր գնում էի անդամագրվելու, տարիքս մերժելու պատճառ էր հանդիսանում: Այստեղ եւ նույնիսկ շատերից մեծ էի, եւ ինձ դուր էր գալիս, որ ինձ իրենց հավասար մեկի պես էին ընդունում: Գնացի՝ պապիկիս 32 տրամաչափի հրացանով զինված: Շուտով արդեն երկու զենք ունեցա: Չենքերի գերակշիռ մասը ազերիներից խլված կամ գողացված զենքեր էին», - պատմում է Սասունը:

այն է, որ ամբողջ կյանքդ ապրում ես՝ չհամակերպվելով այն իրականության հետ, որ նրանք այլևս չկան ու չեն լինի: Նրա խոսքերով՝ Յեղակրոն կամավորական ջոկատից Արցախյան ազգային - ազատագրական շարժման ընթացքում 27 ազատամարտիկ է զոհվել: Բոլորին էլ գիտի ու խոր ցավ է ապրում՝ հիշելով: «Ընկեր կորցնելուց առավել սարսափելին զինաթափվելն է: Մի օր առավոտյան մեր զորանոցը շրջապատեցին՝ հայտարարելով, որ մենք կազմալուծված ենք,